ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «24» Սեպտեմբեր 2019 թ №319 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի № 1272-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1-րդ կետը, «Սերտիֆիկացում և որակ» ՍՊԸ 2019 թվականի ապրիլի 30-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի ««Սերտիֆիկացում և որակ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» № 1272-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ լրացումը.

1) Հրամանի Հավելվածով սահմանված Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի «ՀՀ տեխնիկական կանոնակարգեր» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով. «4. Հայաստանի Հանրապետության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի

անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-Ի № 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 219 որոշում»:

2. «Սերտիֆիկացում և որակ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին տրամադրված համապատասխանության գնահատման մարմնի № Ն-21 նշանակման վկայականը վերաձևակերպել՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ № 018/S-022) № 1-Ա հավելվածով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված և տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի, ինչպես նաև հավատարմագրման ոլորտում առկա տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության գնահատման ձև հանդիսացող պետական գրանցման ենթակա արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված արտադրանքի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի № 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ